Հայաստանի արդյունաբերողների և
գործարարների միություն

Երևանի պետական համալսարանի
Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ

Հարգելի գործընկերներ,

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը և Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը նախաձեռնում են **«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ընկալումը և գործարկումը»** խորագրով գիտագործնական խորհրդաժողով, որի նյութերը նախատեսվում է հրատարակել նախապես՝ առանձին ժողովածուով:

Խնդրում ենք մինչև 2019թ.-ի ապրիլի 10-ը ներառյալ karlen.khachatryan@gmail.com էլ. փոստին ուղարկել ստորև բերված թեմատիկայով ձեր հեղինակային զեկուցման նյութը (մինչև 8 էջ ծավալով)՝ նամակի թեմայում նշելով economic forum:

Խորհրդաժողովի թեմատիկան է.

- ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման մարտահրավերները և տնտեսական հեղափոխության անհրաժեշտությունը
- Տնտեսական հեղափոխության գաղափարը, նպատակը և տեսլականը
- Ինստիտուտների և հասարակության վարքագծի վերափոխումները տնտեսական հեղափոխության համատեքստում
- Տնտեսական հեղափոխության առաջնահերթությունները և ոլորտային առանձնահատկությունները

Ներկայացվող պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ Word-97-2003 ծրագրով:
Էջի ֆորմատը՝ A4 (210x297 մմ), լուսանցքները. ձախից, վերևից, աջից՝ 20 մմ, ներքևից՝ 15 մմ:
Հիմնական տեքստի տառաչափը՝ 10 pt, տողերի հեռավորությունը՝ 1: Տառատեսակը՝ Sylfaen:
Առաջին էջի վերին տողում գրվում է աշխատանքի վերնագիրը, հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, պաշտոնը, գիտական աստիճանը և կոչումը, էլ. փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը:

Նշված ժամկետում ներկայացված նյութերից խորհրդաժողովի կազմկոմիտեն կընտրի ժողովածուում ներառվող զեկույցները: